

մին ալ, որոնք պատգամաւոր էին ժողովրդեան կողմանէ . իմանալու համար թէ արդեօք թագաւորական ընտանիքը գեռ Տաճարին մէջն են : Երոնցմէ մէկը որ ազգային պահապան զինուորի զգեստ հագեր էր, ուսերուն վրայ ըսպայի նշաններ դրած, և մէջքէն սուր մը կախած, ուզեց որ բանտարգեալները պատուհանէն մէյմը ժողովրդեան տեսնուին . սակայն երբոր տեսաւ որ պաշտօնեայք յանձն չառին աս բանս, դառնալով թագուհւոյն կոպիտ կերպով մը ըսաւ իրեն . “ Եւ ուզեր պաշտօնեայք որ տեսնաք Լամպալ իշխանուհւոյն գլուխը, զորն որ քիչ մը առաջ բերինք հոս ցուցնելու ձեզի, և իմացնելու թէ ինչպէս ժողովուրդը կը հանէ վրէժը իր թշնամիներէն և բռնաւորներէն . բայց խորհուրդ կուտամ ես ձեզի որ ժողովրդեան մէյմը տեսնուիք, և եթէ յանձն չէք առներ՝ գիտնաք որ ինքը ձեզի պիտի գայ ” : Եւ ըսպառնալիքներէս սաստիկ տագնապած թագուհին մարեցաւ ինկաւ . շուտ մը ձեռքէս եկած օգնութիւնը սկսայ ընել, և Եղիսաբեթ տիկնոջ հետ մեծ աթոռի մը վրայ դրինք զինքը . տղաքը սաստիկ կուլային, և իրենց մանկական գրգռանքը կը ջնային ուշաբերել մայրերին . բայց զինուորին քարացեալ սիրտը չէր շարժեր աս խեղճ տեսարանէս . ան ատեն թագաւորը իրեն դառնալով՝ ըսաւ աներկիւղ կերպով մը . “ Երգէն գիտես, պարոն, որ մենք ամէն բանի պատրաստ ենք, բայց դուն շատ աւելի աղէկ կ'ընէիր թէ որ չիմացնէիր թագուհւոյն աս աղետալի լուրը ” . այս խօսքիս դուրս գնաց անօրէն իր ընկերներուն հետ : Հագիւ թէ թագուհին քիչ մը զօրանալով աչքերը բացաւ, տեսնելով տղոց լացը սկսաւ նորէն լալ և տագնապիլ . և քիչ մը վերջը ամէնքը մէկտեղ Եղիսաբեթ տիկնոջ խուցը գնացին ուսկից որ ժողովրդեան աղաղակները այնչափ սաստիկ չէին լսուէր : Եւ քանի մը վայրկեան ալ թագուհւոյն խուցը կեցայ, և ծածուկ վարագուրին տակէն դուրս փողոցը նայեցայ, ուր նո-

րէն տեսայ Լամպալ իշխանուհւոյն գլուխը, զորն որ մեծ յաղթանակի մը պէս ասդին անդին կը տանէին . մէկ կողմանէ ալ չորս կողմերնիս եղած տըները հետզհետէ կը կործանէին, որպէս զի բոլորովին անպատասպար մնայ աշտաբակը : Եւ միջոցին ուրիշ սրիկայ մըն ալ խեղճ իշխանուհւոյն սիրտը ձեռքը առած սրոյ ծայրը կ'անցընէր . քիչ մը ետքը անօրինաց խուճը մը միաբանած՝ ուզեցին բռնութեամբ աշտարակին դուռ բանալ, բայց տ' () ժոն քաղաքական պաշտօնեայն համառօտ բան մը խօսեցաւ ժողովրդեան . “ Եւ ուր, ըսաւ, աս մենեին իրաւունք չունիք Եթուանէթ թագուհւոյն գլուխը ուզելու . միայն շրջակայ գաւառաց իրաւունքը ձերն է . Եւ զորիան՝ ասոնց պահպանութիւնը Եւրիզայուց յանձնած է, և դուք պէտք է որ օգնէք մեզի պահպանելու զասոնք ինչուան որ ազգային ժողովը իր վրէժը հանէ ” : Եւ ամ մը աշխատիլ հարկ եղաւ զիրենք ցրուելու համար :

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

[Ոստրայի մէջ դռները զարնելուն վրայ] :

Եւ ոստրայի մէջ մեծ դռները քիչ են, և պզտի դռներուն պէս միշտ գոց կը պահուին : Եւ զհանրապէս բոլոր տուններուն մէջ մէկ ընտանիքէն աւելի չեն բնակիր, և աս պատճառաւ կ'իմացուի մէկէն թէ արդեօք դուռը զարնողը զով կը փնտռէ և թէ զարնողը ինչ աստիճանի մարդ է : Եւ բանս սովորութեամբ հաստատուեր է Եւ ոստրայի մէջ, և ասոր համար ալ զարնուածքները համրանքի վրայ են, կամ ուժով ու նուազ զարնելուն վրայ :

[Եւ որ դուռը մէկ անգամ զարնուի, կ'իմացուի որ զարնողը կամ թնամալաւոր է կամ ածխավաճառը, կամ տանը ծառան, կամ մուրացկան մը, և կը նշանակէ թէ Կը խնդրէ՞մ հոս :]

Եւ թէ որ թէթեւ կերպով մը զարնուի . ըսել է թէ զարնողը թղթա-

բաշխն է, կամ այցելուութեան և հրաւերքի տուժանկաց թղթաբերն է, և կամ պատգամաւոր մը. կ'իմացնէ թէ հարկաւոր գործողութեան մը համար եկած է. և կը նշանակէ թէ Պէտք է որ հոն է:

Վրան 3 անգամ զարնուածքը կ'իմացնէ որ զարնողը՝ տանը կամ վարժապետն է կամ վարժապետուհին և կամ այնպիսի մարդիկ որ շատ կը յաճախեն ան տունը. ըսել կ'ուզէ հրամայական կերպով մը թէ Բայ:

Նորս անգամ ուժով զարնուածքը կը նշանակէ որ եկողը հասարակ մարդ մը չէ, այլ ազնուականութեամբ կամ պաշտամամբ նշանաւոր անձ մը՝ որ ձիով տանը դուռը հասած է, և ուժով զարնելովը տանտիրոջ կ'ուզէ իմացնել թէ կ'ուզէ ներս հոն:

Ս երջապէս թէ որ դրան չորս զարնուածքը երկու անգամ կրկնուին, ու երկու անգամն ալ ընդհատեալ միջոցի մէջ, կը նշանակէ որ զարնողը լորտ մըն է կամ անոր լծակիցը, կամ ուսու իշխան մը, կամ գերմանացի պարոն մը, և կամ ուրիշ կարգէ դուրս մարդ մը. և կը նշանակէ, Հասարակացէ, լասն զի 3է. զի մեծ պատիւ է ընէ՛մ անէրնիդ գալով:

Լսանկ ուժով զարնուածքներով, կրնան երբեմն խաբուիլ այնպիսի ունայնամիտ անձինք որոնք այցելութիւնները կ'ընդունին: Սակայն ըստ ինքեան մտածելով՝ ձանձրացուցիչ են և ընկերական կենաց մէջ անհրաժեշտ քաղաքավարութեան անմասն սովորութիւն մըն է: Սր և իցէ մարդու այցելութեան թալուն վախճանը ուրիշ բան չէ, բայց եթէ՝ դիմացինին հաճոյք մը ընել. և այսպիսի հաճոյից մէջ դիտելիք բաները մասնաւոր խնամքով պահելու է: Նոգողիցիք անանկ վրէժխնդիր են դրանց զարնուածքին սովորութեանը, որ եթէ ծառայ մը զարնուածք մը պակաս ընէ տիրոջը վիճակին պահանջածէն, մէկէն ետ կը ճամբուի:

Երջապէս թէ որ դրան չորս զարնուածքը երկու անգամ կրկնուին, ու երկու անգամն ալ ընդհատեալ միջոցի մէջ, կը նշանակէ որ զարնողը լորտ մըն է կամ անոր լծակիցը, կամ ուսու իշխան մը, կամ գերմանացի պարոն մը, և կամ ուրիշ կարգէ դուրս մարդ մը. և կը նշանակէ, Հասարակացէ, լասն զի 3է. զի մեծ պատիւ է ընէ՛մ անէրնիդ գալով:

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ց Փ

Արեւելեան վերջին խնդիրն ու պատերազմը¹:

1854 — ՆՈՅԵՄԲԵՐ

23. Օսմանեան պաշտօնէից ժողովոյն փոփոխութիւն կ'ըլլայ. — Մեծ վեզիր Մէհմետ-Գըպրըզլը փաշային տեղ՝ Ռէշիտ փաշան կ'անցնի. Ալի փաշան ալ արտաքին գործոց պաշտօնը ձեռք կ'առնու:

26. Ապրիլի 20ին Աստրիոյ և Բրուսիոյ մէջ ֆրանսոսական և պաշտպանողական դաշնակցութեան յաւելուած յոգուածը կը ստորագրուի ի վեննա. մէկ կողմանէ կոմս Պուլ-Հաւընշգայն Աւստրիոյ արտաքին գործոց պաշտօնէին, ու մէկալ կողմանէ կոմս Անիմ Բրուսիոյ գեսպանին ձեռքովը: — Չորս պատրաստական պայմանները կը ճանչցուն չիմունք ապագայ խաղաղութեան դաշնագրութեանցը. Եւրոպական ծանր պարագայիցս մէջ կը պահանջուի բոլոր Գերմանիայէն միաբան գործելու ապահովութիւն մը. Բրուսիա կը պարտաւորէ ինքզինք օգնելու Աստրիոյ, թէ որ այս վերջնոյս Դանուբեան գաւառաց մէջ գտնուած զօրքը յարձակմունք մը կրելու ըլլայ:

¹ Տես հտ. ԺԳ, էրես 15, 92, 159, 191, 223, 255, 286, 334. հտ. ԺԴ, էրես 11, 82, 129, 162, 227, 275, 307, 355:

28. Կորչաքով իշխանին յայտարարութիւնը առ կոմս Պուլ Աստրիոյ արտաքին գործոց պաշտօնէայ: — Ռուսաց կայսրը վեննայի դահլճին չորս առաջարկութիւնները կ'ընդունի, իբր սկիզբ խաղաղութեան դաշնագրութեանը: Դեկտեմբերի 3ին ու Աին վեննայի ու Պեռլինի դահլճները այս նիւթոյս վրայ պաշտօնական հաղորդակցութիւններ կ'ընեն Լոնտոնի ու Բարիզու դահլճաց:

ԴԵԿՏԵՄԲԵՐ

2. Գաղղիոյ, Աստրիոյ և Մեծին Բրիտանիոյ մէջ վեննա հաստատուած դաշնագրութիւնը: Յ. Իրէք բարձրագատիւ կողմերը ինքզինքնին կը պարտաւորեն Ռուսիոյ հետ միաբանութեան մը չինջնալու, մինչև որ իրարու հետ չսորհրդակցին: Բ. Աստրիա կը խոստանայ Դանուբեան իշխանութեանց սահմանները պաշտպանելու Ռուսիոյ դէմ. և այն երկիրներուն մէջ, դաշնակցաց ամէն պատերազմական շարժումներէն առնանին արգելք մը չըլլալու: Գ. Թէ որ Ռուսի և Աստրիոյ մէջ թշնամութիւնները սկսին՝ Աստրիա արեւմտեան տէրութեանց հետ պաշտպանողական և ֆրանսոսական դաշնագրութիւն պիտի ընէ: Դ. Թէ որ նախընթաց յոգուածը կատարուելու ըլլայ՝